ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 61

«02» 07 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼԻՔ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 53 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին» Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության համապատասխանաբար՝ եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա և տարեկան հաշվետվությունները (այսուհետ՝ հաշվետվություն) մինչև յուրաքանչյուր եռամսյակին, կիսամյակին, ինն ամսվան և տարվան հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.03.2019թ. N 254-Ն հրամանը (այսուհետ՝ հրաման), ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությամբ անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման մասին» հաշվետվությունում ընդգրկվելիք փաստացի արդյունքային ցուցանիշների մշակված ցուցակը (այսուհետ՝ ցուցակ)՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝

Մինչև յուրաքանչյուր եռամսյակին, կիսամյակին, ինն ամսվան և տարվան (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) հաջորդող ամսվա 5-ը, թղթային և էլեկտրոնային տարբերակներով, համապատասխան իրավասությունների սահմաններում (ըստ համապատասխան առանձին չափորոշիչներին (գործունեության տեսակներին) ունեցած մասնակցության), Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (այսուհետ՝ վարչություն) ներկայացնել նույն հաշվետու ժամանակաշրջանների համար արձանագրված փաստացի արդյունքային ցուցանիշների վերաբերյալ սույն հրամանի 1-ին կետով հաստատված ցուցակը (միջոցառումների, աշխատանքների, գործողությունների, գործերի, նյութերի, փաստաթղթերի և այլ տվյալների մասին տեղեկությունները)՝ աճողական կարգով լրացված՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին՝

Մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 3-ը, սույն հրամանի 1-ին կետով հաստատված ցուցակը՝ աճողական կարգով լրացված, ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին:

4. Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին՝

Մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-ը, թղթային և էլեկտրոնային տարբերակներով, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների և ավագ դատախազների ու կայազորների զինվորական դատախազությունների կողմից ներկայացված ցուցակների ամփոփման արդյունքում կազմված միասնական ցուցակը, աճողական կարգով լրացված, ներկայացնել վարչություն:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությամբ անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման մասին» հաշվետվությունում ընդգրկվելիք փաստացի արդյունքների ներկայացման և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 122 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53 հրամանը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
«02» հոկտեմբեր 2020թ.

N 61 հրամանի

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությամբ անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման մասին

202 թ. ----------համար

Նշել հաշվետու ժամանակաշրջանը (1-ին եռամսյակի, կիսամյակի, 9 ամսվա, տարվա)

Նշել ներկայացնող մարմնի անունը

Զափորոշչի նկարագրությունը

1. Պաշտոնական հրապարակման ենթակա իրավական ակտերի նախագծերի մշակում (փաստաթղթերի ընդհանուր թիվը)

Հ/Հ	Փաստաթղթի և այլ հիմքերի անվանումը, որտեղից վերցվել են համապատասխան տեղեկությունները	Քանակը (հատ)	Հիմքերի գտնվելու վայրը (կարգագրերը)
1	2	3	4
1.	**Օրինակ՝** «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին (օրենքի 3-րդ, 6-րդ, 7.1-րդ, 8-րդ, 10-րդ հոդվածներ): Հիմք՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 18.02.2019թ. որոշումը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին 10.06.2019թ. N 30/8-108-19 գրությունը:	1	20/5(1)
2.	**Օրինակ՝** ՀՀ Կառավարության 23.10.2019թ.՝ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» N 1225-Ն որոշման փոփոխությունները:	1	-//-
	Ընդամենը՝	-----	

2. Այլ մարմիններին ու կազմակերպություններին հաշվետվությունների և վերլուծությունների ներկայացում (փաստաթղթերի ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	**Օրինակ՝** 2019թ. ընթացքում ՀՀ դատախազության կատարած աշխատանքի	1	20/6

	մասին ՀՀ Ազգային ժողովին հասցեագրված 14.04.2019թ. N 20/6-79-13 հաղորդում:		
2.	**Օրինակ՝** ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի գործադիր քարտուղար Վ.Երոխինին ուղարկված 16.01.2019թ. N 15-12-19 գրություն: Հիմք՝ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից կազմված 26.02.2019թ. տեղեկանքը:	1	20/8(11)
	Ընդամենը՝	-----	

3. Քաղաքացիների ընդունելություն (ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 13-րդ բաժնի 13-րդ սյունակի 23-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 13-րդ բաժնի 13-րդ սյունակի 23-րդ տողից:	1	20/6
	Ընդամենը՝	-----	

4. Դիմումների և բողոքների ուսումնասիրություն (ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 13-րդ բաժնի 1-ին սյունակի 23-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 13-րդ բաժնի 1-ին սյունակի 23-րդ տողից:	----- -----	----- -----
	Ընդամենը՝	-----	

5. Հանրային իրազեկում (միջոցառումների ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 14-րդ բաժնի 1-ին աղյուսակի 8-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 14-րդ բաժնի 1-ին աղյուսակի 8-րդ տողից:	----- -----	----- -----

	Ընդամենը՝	-----	

6. Միջգերատեսչական խորհրդակցություններ (միջոցառումների ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	**Օրինակ՝** ՀՀ դատախազությունը 15.03.2019թ. մասնակցել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Աղվերանում «.....» թեմայով կազմակերպված միջգերատեսչական խորհրդակցությանը: Հիմք՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղարկված 21.12.2019թ. N 19782-19 գրությունը:	-----	-----
2.	**Օրինակ՝** Գեղարքունիքի մարզպետարանում 19.11.2013թ. քննարկվել է մարզի տարածքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վիճակը: Հիմք՝ Գեղարքունիքի մարզպետի կողմից Գեղարքունիքի մարզի դատախազին ուղարկված 21.12.2019թ. N 2345-19 գրությունը:	-----	-----
	Ընդամենը՝	-----	

7. Միջազգային համագործակցություն (հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների, վերապատրաստումների և այլ համանման միջոցառումների ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	**Օրինակ՝** ՀՀ դատախազությունը 2019թ. մարտի 18-22-ը մասնակցել է Չեխիայի Հանրապետության Պրահա քաղաքում դատախազների, դատավորների և քննիչների հակակոռուպցիոն վերապատրաստմանը: Հիմք՝ ՀՀ գլխավոր դատախազի 12.03.2019թ. N 8/31 հրամանը:	-----	-----
2.	**Օրինակ՝** ՀՀ գլխավոր դատախազությունը մասնակցել է ԵԱՀԿ և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված «Ժողովրդական ընտրությունների խթանում» խորագրով կոնֆերանսին՝ 17.01.2019թ., «Երեբունի պլազա» հյուրանոցում: Հիմք՝ ՀՀ դատախազության աշխատակազմի 10.01.2019թ. N 25/2-50-19 կից գրությամբ ներկայացրած տեղեկանքը:	-----	-----
	Ընդամենը՝		

8. Ծրագրերի կառավարում և համակարգում (բյուջետային ծրագրերի ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	**Օրինակ՝** ՀՀ Նախագահի 21.04.2019թ. N ՆԿ-59-Ն կարգադրությունը (2-րդ հավելված (Դատաիրավական բարեփոխումների 2013-2019	-----	-----

	թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների ցանկի համաձայն)):		
2.	**Օրինակ՝** ՀՀ Կառավարության 27.03.2018թ. N 1039-Ն որոշումը (Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի միջոցառումների ցանկի համաձայն):	-----	-----
	Ընդամենը՝	-----	

9. Քրեական հետապնդման հարուցում (գործերի ընդհանուր թիվը)

Ծանոթություն.
Սույն չափորոշիչը ծրագրով մշակված չէ, այն պետք է մշակվի և լրացվի միայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո:

10. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացում (հսկողության վերցվելիք հաղորդումների, նյութերի, քրեական գործերի, տրվելիք ցուցումների, ներկայացվելիք միջնորդագրերի և մյուս գործերի ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Քննչական աշխատանքի մասին» (Ձև 1 Մ) վիճակագրական հաշվետվության 1-ին բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին և 2-րդ տողերի և 2-րդ սյունակի 30-րդ տողի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Քննչական աշխատանքի մասին» (Ձև 1 Մ) վիճակագրական հաշվետվության 1-ին բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին և 2-րդ տողերի և 2-րդ սյունակի 30-րդ տողի գումարը:	----- -----	----- -----
2.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին տողից:	----- -----	----- -----
3.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 2-րդ տողի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 2-րդ տողի գումարը:	----- -----	----- -----
4.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 11-րդ և 43-րդ տողերի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի	----- -----	----- -----

	մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 11-րդ և 43-րդ տողերի գումարը:		
5.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 51-րդ տողի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 51-րդ տողի գումարը:	----- -----	----- -----
6.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 5-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 2-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 5-րդ տողից:	----- -----	----- -----
	Ընդամենը՝	-----	

11. Դատարանում մեղադրանքի պաշտպանություն (դատախազի մասնակցությամբ անցկացված դատական գործերի և դատական նիստերի ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 3-րդ բաժնի 1-ին սյունակի 1-ին տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 3-րդ բաժնի 1-ին սյունակի 1-ին տողից:	----- -----	----- -----
2.	ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին տողից:	----- -----	----- -------
	Ընդամենը՝	-----	

12. Դատարանում պետական շահերի պաշտպանության հայցերի հարուցում (հայցերի, ուսումնասիրությունների, ստուգումների, նախապատրաստված նյութերի, նախազգուշացումների, հարուցված քրեական գործերի և որոշումների ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին»	-----	-----

	վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին տողից:	----- -----	----- -----
2.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին սյունակի 24-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին սյունակի 8-րդ տողի և 4-րդ բաժնի 6-րդ աղյուսակի 1-ին սյունակի 5-րդ տողի գումարը:	----- -----	----- -----
3.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 3-րդ սյունակի 24-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 1-ին աղյուսակի 3-րդ սյունակի 8-րդ տողից:	----- -----	----- -----
4.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 3-րդ աղյուսակի 3-րդ սյունակի 10-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 3-րդ աղյուսակի 3-րդ սյունակի 7-րդ տողից:	----- -----	----- -----
5.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 5-րդ աղյուսակի 8-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 5-րդ աղյուսակի 13-րդ տողի և 4-րդ բաժնի 7-րդ աղյուսակի 7-րդ տողի գումարը:	----- -----	----- -----
	Ընդամենը՝	-----	

13.Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկում (վճիռների, դատավճիռների և որոշումների դեմ բերված բողոքների ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 5-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 1-ին տողի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 5-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 1-ին տողի գումարը:	----- -----	----- -----

2.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 5-րդ բաժնի 3-րդ աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 1-ին տողի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 5-րդ բաժնի 3-րդ աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 1-ին տողի գումարը:	----- -----	----- -----
3.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 4-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին և 2-րդ տողերի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 4-րդ բաժնի 4-րդ աղյուսակի 1-ին սյունակի 1-ին և 2-րդ տողերի գումարը:	----- -----	----- -----
4.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 2-րդ և 4-րդ սյունակների 10-րդ տողերի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 2-րդ և 4-րդ սյունակների 10-րդ տողերի գումարը:	----- -----	----- -----
	Ընդամենը՝	-----	

14.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացում (գործերի ընդհանուր թիվը)

1	2	3	4
1.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին սյունակի 11-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 1-ին սյունակի 16-րդ տողից:	----- -----	----- -----
2.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 5-րդ սյունակի 11-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 5-րդ սյունակի 16-րդ տողից:	----- -----	----- -----
3.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 8-րդ սյունակի 11-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի	----- -----	----- -----

	8-րդ սյունակի 16-րդ տողից:		
4.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 9-րդ սյունակի 11-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 9-րդ սյունակի 16-րդ տողից:	----- -----	----- -----
5.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 14-րդ սյունակի 11-րդ տողից: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 1-ին աղյուսակի 14-րդ սյունակի 16-րդ տողից:	----- -----	----- -----
6.	1) ՀՀ դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 2-9-րդ տողերի գումարը: 2) ՀՀ զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության 6-րդ բաժնի 2-րդ աղյուսակի 1-ին սյունակի 2-ից 9-րդ տողերի գումարը:	----- -----	----- -----
	Ընդամենը՝	-----	

Հավելված N 2
ՀՀ գլխավոր դատախազի
«___» _____ 2020թ.

N ____ հրամանի

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությամբ անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման մասին» հաշվետվությունում ընդգրկվելիք փաստացի արդյունքային ցուցանիշների ցուցակը լրացնելու վերաբերյալ

1. Ցուցակը իրավասությունների համապատասխան սահմաններում լրացվում է ըստ Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությանը վերաբերող 14 **չափորոշիչների (գործունեության տեսակների),** որոնց նկարագրությունները նշված են որպես վերնագրեր և համարակալված են հերթական համարներով: Օրինակ՝ «1.Պաշտոնական հրապարակման ենթակա իրավական ակտերի նախագծերի մշակում» և այլն:

2. Չափորոշիչները վերաբերում են հետևյալին.

1) 1-ին չափորոշչում («1. Պաշտոնական հրապարակման ենթակա իրավական ակտերի նախագծերի մշակում (փաստաթղթերի ընդհանուր թիվը)») ներկայացվում են պաշտոնական հրապարակման ենթակա և ընթացք տրված իրավական ակտերի (օրենսգրքերի, օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի (կարգադրությունների), Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշումների, Հայաստանի Հանրապետության նախարարների և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների համապատասխան հրամանների և այլն) մշակման վերաբերյալ առանձնացված տվյալները, որոնց կազմման նախաձեռնությունը բխում է Հայաստանի Հանրապետության դատախազությունից՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

2) 2-րդ չափորոշչում («2. Այլ մարմիններին ու կազմակերպություններին հաշվետվությունների և վերլուծությունների ներկայացում (փաստաթղթերի ընդհանուր թիվը)») ներկայացվում են այլ մարմիններին ու կազմակերպություններին ուղարկված՝ դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող բոլոր տեսակի հաշվետվությունների ու վերլուծությունների վերաբերյալ տվյալները (փաստաթղթերի ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

3) 3-րդ չափորոշչում («3. Քաղաքացիների ընդունելություն (մարդկանց թիվը)») ներկայացվում են դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած բոլոր ընդունելությունների վերաբերյալ տվյալները (մարդկանց թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

4) 4-րդ չափորոշչում («4. Դիմումների և բողոքների ուսումնասիրություն (ընդհանուր թիվը)») ներկայացվում են դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած և ընթացք տրված՝ ՀՀ դատախազության կանոնակարգում որպես «դիմում» և «բողոք» բնորոշված փաստաթղթերի վերաբերյալ տվյալները (ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

5) 5-րդ չափորոշչում («5. Հանրային իրազեկում (միջոցառումների ընդհանուր թիվը)») ներկայացվում են դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող զանգվածային լրատվական միջոցների, այդ թվում՝ համացանցի միջոցով իրականացված բոլոր իրազեկումների վերաբերյալ տվյալները (միջոցառումների ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային և/կամ էլեկտրոնային հիմքերը.

6) 6-րդ չափորոշչում («6. Միջգերատեսչական խորհրդակցություններ (միջոցառումների ընդհանուր թիվը)») ներկայացվում են ներկայացնողի կողմից կամ նրա մասնակցությամբ անցկացված դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած, վերապատրաստման, ուսուցողական, ճանաչողական, պարզաբանման, փորձի փոխանակման, համագործակցության, ինչպես նաև լայնամասշտաբ աշխատանքային, ծառայողական և այլ համանման բնույթի միջգերատեսչական խորհրդակցությունների, քննարկումների, հանդիպումների վերաբերյալ տվյալները (միջոցառումների ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը: Մասնավորապես, պետք է նշվեն տվյալ դատախազության կամ ստորաբաժանման կիսամյակային և տարեկան աշխատանքների ամփոփիչ խորհրդակցությունները, ընդ որում՝ տարեկանի մասին նշվում է վերջինիս հաջորդող տարվա 1-ին եռամսյակի, իսկ կիսամյակայինի մասին՝ վերջինիս հաջորդող 9 ամսվա համապատասխան հաշվետվություններում.

7) 7-րդ չափորոշչում («7. Միջազգային համագործակցություն (հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների, վերապատրաստումների և այլ համանման միջոցառումների ընդհանուր թիվը)») ներկայացվում են ներկայացնողի կողմից կամ նրա մասնակցությամբ անցկացված դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած, վերապատրաստման, ուսուցողական, ճանաչողական, պարզաբանման, փորձի փոխանակման, համագործակցության, աշխատանքային, ծառայողական և այլ համանման բնույթի միջազգային մակարդակի հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների, վերապատրաստումների և այլ համանման միջոցառումների վերաբերյալ տվյալները (միջոցառումների ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

8) 8-րդ չափորոշչում («8. Ծրագրերի կառավարում և համակարգում (բյուջետային ծրագրերի ընդհանուր թիվը)») ներկայացվում են ներկայացնողի կողմից կամ նրա մասնակցությամբ անցկացված դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած, վերապատրաստման, ուսուցողական, ճանաչողական, պարզաբանման, փորձի փոխանակման, համագործակցության, աշխատանքային, ծառայողական, պաշտոնական և այլ բնույթի ծրագրերի վերաբերյալ տվյալները (բյուջետային ծրագրերի ընդհանուր թիվը)՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը.

9) 9-րդ չափորոշիչը («9. Քրեական հետապնդման հարուցում (գործերի ընդհանուր թիվը)») ծրագրով մշակված չէ, այն պետք է մշակվի ու լրացվի միայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո.

10) 10-րդ («10. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացում (հսկողության վերցվելիք հաղորդումների, նյութերի, քրեական գործերի, տրվելիք ցուցումների, ներկայացվելիք միջնորդագրերի և մյուս գործերի ընդհանուր թիվը)»), 11-րդ («11. Դատարանում մեղադրանքի պաշտպանություն (դատախազի մասնակցությամբ անցկացված դատական գործերի և դատական նիստերի ընդհանուր թիվը)»), 12-րդ («12. Դատարանում պետական շահերի պաշտպանության հայցերի հարուցում (հայցերի, ուսումնասիրությունների, ստուգումների, նախապատրաստված նյութերի, նախազգուշացումների, հարուցված քրեական գործերի և որոշումների ընդհանուր թիվը)»), 13-րդ («13. Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկում (վճիռների, դատավճիռների և որոշումների դեմ բերված բողոքների ընդհանուր թիվը)») և 14-րդ («14. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացում (գործերի ընդհանուր թիվը)») չափորոշիչները ներկայացվում են ներկայացնողի կողմից կամ նրա մասնակցությամբ անցկացված դատախազական լիազորությունների և այլ պաշտոնեական գործընթացների իրականացմանն առնչվող, համապատասխան գրանցում ստացած, համապատասխան վիճակագրական հաշվետվությունների վերաբերյալ տվյալները՝ ըստ չափորոշչում նշված օրինակների՝ նշելով կոնկրետ փաստաթղթային հիմքերը:

3. Ցուցակը լրացվում է աճողական կարգով, այսինքն՝ տվյալ տարվա մեջ ընդգրկված, նախորդ հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված **փաստացի արդյունքային ցուցանիշները (միջոցառումների, աշխատանքների, գործողությունների, գործերի, նյութերի, փաստաթղթերի և այլ տվյալների մասին տեղեկությունները)** ընդգրկվում և արտացոլվում են ներկայացվող հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված փաստացի արդյունքային ցուցանիշներում: Մասնավորապես, տվյալ տարվա 1-ին եռամսյակի տվյալների ցուցակում ընդգրկվում են միայն տվյալ եռամսյակի տվյալները, տվյալ տարվա կիսամյակի տվյալների ցուցակում ընդգրկվում են տվյալ տարվա 1-ին և 2-րդ եռամսյակների միասնական հաշվարկված տվյալները, տվյալ տարվա 9 ամսվա տվյալների ցուցակում ընդգրկվում են տվյալ տարվա 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների միասնական հաշվարկված տվյալները, իսկ տվյալ տարվա տարեկան տվյալների ցուցակում ընդգրկվում են տվյալ տարվա 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների միասնական հաշվարկված տվյալները:

4. Յուրաքանչյուր չափորոշչի մասով փաստացի արդյունքային ցուցանիշները լրացվում են ըստ 4 սյունակներով տարանջատված պահանջների, որոնցից՝

1) 1-ին սյունակում լրացվում է փաստացի արդյունքային ցուցանիշի հերթական համարը.

2) 2-րդ սյունակում լրացվում է հնարավոր ընդգրկուն տեղեկություն այն փաստաթղթերի և (կամ) այլ հիմքերի մասին, որտեղից վերցվել են համապատասխան փաստացի արդյունքային ցուցանիշները: Օրինակները տես 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափորոշիչների 2-րդ սյունակի 1-ին և 2-րդ տողերում: Հնարավոր է, որ 2-րդ սյունակում ընդգրկվելիք տեղեկությունները վերաբերեն նույն հարցին, սակայն տարբեր բնագավառների, օրինակ՝ քաղաքացիական և զինվորական դատախազություններին, որոնք միմյանցից տարանջատված են «1)» և «2)» ենթատողերով: Տվյալ դեպքում փաստացի արդյունքային ցուցանիշները նշվում են նույն տողի հաջորդ սյունակում, նույն տողի ուղղությամբ: Օրինակը տես 3-րդ, 4-րդ և 5-րդ չափորոշիչների 2-րդ սյունակի 1-ին և 2-րդ տողերում և 10-14-րդ չափորոշիչների 2-րդ սյունակի բոլոր տողերում.

3) 3-րդ սյունակում լրացվում է տվյալ չափորոշիչը բնութագրող փաստացի արդյունքային ցուցանիշների քանակը՝ հատով.

4) 4-րդ սյունակում լրացվում է 2-րդ սյունակում նշված փաստաթղթերի և (կամ) այլ հիմքերի՝ տվյալ դատախազի (աշխատակցի) մոտ, դատախազությունում կամ կառուցվածքային ստորաբաժանումում (աշխատակազմում) գտնվելու (պահվելու) վայրը՝ նշելով սահմանված կարգով հաստատված անվանակարգի կարգագրի համարը:

5. Յուրաքանչյուր չափորոշչի փաստացի արդյունքային ցուցանիշների գրանցման ավարտից հետո, վերջում՝ 2-րդ սյունակի վերջին տողում, առանց հերթական համարակալման, մգացված շեղատառերով, **«Ընդամենը»** բառով նշվում և նկատի է առնվում տվյալ չափորոշիչը բնութագրող և վերևում նշված փաստացի արդյունքային ցուցանիշների ընդհանուր քանակը, որի թվային (գումարային) արտահայտությունը նշվում է համապատասխանաբար՝ 3-րդ սյունակների վերջին տողերում (տե՛ս բոլոր չափորոշիչների 2-րդ և 3-րդ սյունակների վերջին տողերում):

6. Ցուցակի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ չափորոշիչների 2-րդ սյունակներում առանց **«Օրինակ՝»** գրառման նշված վիճակագրական հաշվետվությունների տվյալների վերաբերյալ գրառումները փոփոխման ենթակա չեն և այդ տվյալների ներկայացումը պարտադիր է համապատասխան տեղեկությանը տիրապետող դատախազների, դատախազությունների ու կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ դատախազության աշխատակազմի համար: Տվյալ դեպքում համապատասխան չափորոշիչների 3-րդ սյունակներում «-----» տեսքով նշված գծիկների փոխարեն պետք է լրացվեն համապատասխան թվերը, որոնք պետք է հանդիսանան ցուցակում նշված՝ կոնկրետ տեսակի վիճակագրական հաշվետվության համապատասխան բաժնի աղյուսակի սյունակի և տողի թվային տվյալները, կամ, հատկապես նախատեսված լինելու դեպքում, դրանցից մի քանիսի գումարը:

7. Ցուցակի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ չափորոշիչներում նշված վիճակագրական հաշվետվությունների տվյալները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության «Դատախազի աշխատանքի մասին» համապատասխան վիճակագրական հաշվետվությունների, իսկ 10-րդ չափորոշչի 1-ին կետում նշված վիճակագրական հաշվետվությունների տվյալները՝ Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության «Քննչական աշխատանքի մասին (Ձև 1 Մ)» վիճակագրական հաշվետվության համապատասխան տվյալներին:

8. Համապատասխան չափորոշչի մասով տվյալներ չունենալու դեպքում դրա 2-րդ սյունակի 1-ին տողում լրացվում են **«Տվյալներ չկան»** բառերը, իսկ հաջորդ՝ 3-րդ սյունակի 1-ին տողում դրվում է գծիկ՝ «-----»:

9. Ցուցակում նշվելիք տվյալները պետք է բխեն համապատասխան փաստաթղթային հիմքերից:

10. Ցուցակը որպես հաշվետվություն ներկայացվում է սույն հավելվածում նշված տեսքով՝ համապատասխան ուղեկցական գրությամբ: